Արձանագրություն N 2

**<<ՀՀՔՊԿ-ԳՀԱՇՁԲ-17/10>> ծածկագրով ՀՀ Արմավիրի մարզի Էջմիածին քաղաքի թիվ 2 երաժշտական դպրոցի վերակառուցման նախագծային աշխատանքների ձեռքբերման գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի**

ք. Երևան

27.07.2017թ
ժամը 11:30

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Ա. Ջանջուղազյան

Հանձնաժողովի անդամներ ՝ Ռ. Եղիազարյան/ գնահատող /
Ա. Գրիգորյան / գնահատող /
Ֆ. Սարգսյան / բացող /

Հանձնաժողովի քարտուղար՝ Տ. Վասիլյան

Բացակայում էր
Հանձնաժողովի անդամ՝ Գ. Գևորգյան/ գնահատող /

**1. Տեղեկություններ <<ՀՀՔՊԿ-ԳՀԱՇՁԲ-17/10>> ծածկագրով գնման ընթացակարգին ներկայացված հայտերի բացման մասին**

---

(Ա. Ջանջուղազյան)

1.1 Ընդունել ի գիտություն, որ

ա) Գնման ընթացակարգի հայտերը բացվել են www.armeps.am կայքի միջոցով 2017 թվականի հուլիսի 3-ին հրավերով սահմանված 2017 թվականի հուլիսի 2-ի փոխարեն, քանի որ վերջինս ոչ աշխատանքային օր է եղել:

բ) Գնման առարկայի նախահաշվային գինը կազմում է 9 000 000 (ինը միլիոն) ՀՀ դրամ:

գ) Գնման ընթացակարգին հայտ են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

ՀՀ դրամ

| Հ/Հ | Մասնակցի անվանումը | Հասցե | Արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի գումարը) | ԱԱՀ | Առաջարկված ընդհանուր գինը |
|---|---|---|---|---|---|
| 1 | <<ԷԼՄԱ>> ՍՊԸ | ք. Եղվարդ, Երևանյան փող, թիվ 1շենք | 2 450 000 | - | 2 450 000 |
| 2 | <<Հազարաշեն>> ՍՊԸ | ք. Երևան, Կոմիտաս պող. 54Վ | 2 450 000 | - | 2 450 000 |
| 3 | <<Գոռտեխպրոեկտ>> ՍՊԸ | ք. Վանաձոր, Վարդանանց 23/159 | 2 459 000 | - | 2 459 000 |
| 4 | <<Էմ Ջի դիզայն>> ՍՊԸ | ք. Երևան, Բաղյան 1-ին նրբ. 6/6 | 2 700 000 | - | 2 700 000 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 5 | <<Սարգիս և Մարիաննա>> ՍՊԸ | ք. Եղվարդ, Նար Դոսի փողոց, 28ա | 3 500 000 | - | 3 500 000 |
| 6 | <<ՀԳՇՆ>> ՍՊԸ | ք. Երևան, 0028, Կիևյան 16 | 5 833 333 | 1 166 667 | 7 000 000 |
| 7 | <<ԳԱԳՆԱԽՇԻՆ>> ՍՊԸ | ք. Հրազդան, Միկրոշրջան 209/14 | 6 000 000 | - | 6 000 000 |
| 8 | <<ՆՅՈՒ ԻՆԴԱՍԹՐԻՁ>> ՍՊԸ | ք. Երևան, Նոր Նորք Բագրևանդի փ. 1/3, բն. 39 | 7 000 000 | - | 7 000 000 |

դ) Ներկայացված հայտերի ուսումնասիրության արդյունքում առաջացել է փաստաթղթերում էլեկտրոնային թվային ստորագրության և կնիքի առկայության հետ կապված պարզաբանում ստանալու անհրաժեշտություն, որով պայմանավորված՝ հանձնաժողովը որոշել է համապատասխան գրությամբ դիմել լիազոր մարմնին՝ ՀՀ ֆինանսների նախարարությանը, և կասեցնել նիստը մինչև պարզաբանում ստանալը:

ե) ՀՀ ԿԱ քաղաքաշինության պետական կոմիտեի 03.07.2017թ. N 02/27.1/3939-17 գրությանն ի պատասխան ստացվել է ՀՀ ֆինանսների նախարարության 12.07.2017թ. 04/27-1/12633-17 գրությունը: Հիմք ընդունելով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից տրված պարզաբանումը՝ հանձնաժողովը որոշում է.

1. <<ԳԱԳՆԱԽՇԻՆ>> ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը մերժել, քանի որ հայտի ապահովման գումարը փոքր է հրավերով պահանջվող չափից (հայտով առաջարկվող գնի հինգ տոկոսի փոխարեն ներկայացվել է երկու տոկոսը):

2. Առաջարկված նվազագույն գների հավասարությամբ պայմանավորված և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի պահանջները՝ կասեցնել նիստը, ծանուցել ոչ գնային պայմանները բավարարող գնահատված մասնակիցներին՝ <<ԷԼՄԱ>>, <<Հազարաշեն>>, <<Գոռտեխպրոեկտ>>, <<Էմ Ջի դիզայն>>, <<Սարգիս և Մարիաննա>>, <<ՀԳՇՆ>>, <<ՆՅՈՒ ԻՆԴԱՍԹՐԻՁ>> ՍՊ ընկերություններին և հրավիրել ներկայանալու առաջարկված գների նվազեցման նպատակով կազմակերպվող բանակցություններին (ՀՀ ԿԱ քաղաքաշինության պետական կոմիտեի գնումների բաժնում (ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3, IV հարկ հասցեում)) 2017 թվականի հուլիսի 27-ին ժամը 11:30-ին կայանալիք <<ՀՀՔՊԿ-ԳՀԱՇՁԲ-17/10>> ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստում:

զ) <<ՀՀՔՊԿ-ԳՀԱՇՁԲ-17/10>> ծածկագրով գնման ընթացակարգի առաջին տեղ զբաղեցնող մասնակցին որոշելու համար հրավիրված գնային առաջարկի նվազեցման բանակցություններին ընթացակարգի մասնակիցներ <<ԷԼՄԱ>>, <<Հազարաշեն>>, <<Գոռտեխպրոեկտ>>, <<ՀԳՇՆ>> և <<ՆՅՈՒ ԻՆԴԱՍԹՐԻՁ>> ՍՊ ընկերությունները չեն ներկայացել:

է) Բանակցություններին ներկայացել են <<Էմ Ջի դիզայն>> և <<Սարգիս և Մարիաննա>> ՍՊ ընկերությունները, որոնց նվազեցրած գնային առաջարկները կազմել են, համապատասխանաբար, 2 300 000 (երկու միլիոն երեք հարյուր հազար) ՀՀ դրամ և 2 290 000 (երկու միլիոն երկու հարյուր իննսուն հազար) ՀՀ դրամ (կցվում է):

*Ընդունվել է որոշում՝ կողմ - 4, դեմ - 0:*

**2. Տեղեկություններ <<ՀՀՔՊԿ-ԳՀԱՇՁԲ-17/10>> ծածկագրով գնման ընթացակարգի առաջին և հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակիցների մասին**

---

(Ա. Ջանջուղազյան)

2.1 Հիմք ընդունելով ընթացակարգի մասնակիցների կողմից հայտով ներկայացված փաստաթղթերը և ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետը՝ գնահատող հանձնաժողովի կողմից էլեկտրոնային համակարգի միջոցով հայտերը գնահատվել են հետևյալ հերթականությամբ և հետևյալ կերպ.

| *Զբաղեցրած տեղը* | *Մասնակցի անվանումը* | *Հայտի գնահատականը* |
|---|---|---|
| 1 | <<Սարգիս և Մարիաննա>> ՍՊԸ | բավարար |
| 2 | <<Էմ Ջի դիզայն>> ՍՊԸ | բավարար |
| 3 | <<ԷԼՄԱ>> ՍՊԸ | բավարար |
| 3 | <<Հազարաշեն>> ՍՊԸ | բավարար |
| 4 | <<Գոռտեխպրոեկտ>> ՍՊԸ | բավարար |
| 5 | <<ՀԳՇՆ>> ՍՊԸ | բավարար |
| 6 | <<ՆՅՈՒ ԻՆԴԱՍԹՐԻՁ>> ՍՊԸ | բավարար |
| 7 | <<ԳԱԳՆԱԽՇԻՆ>> ՍՊԸ | անբավարար |

*Ընդունվել է որոշում՝ կողմ - 4, դեմ - 0:*

**3. Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնելու մասին**

---

(Ա. Ջանջուղազյան)

3.1 Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի 43-րդ կետի 3-րդ և 4-րդ ենթակետերը՝ հանձնաժողովը որոշեց

- Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնել գնման ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցրած <<Սարգիս և Մարիաննա>> ՍՊԸ-ի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերով <<ֆինանսական միջոցներ>> որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը:
- Ծանուցել 1-ին տեղ զբաղեցրած <<Սարգիս և Մարիաննա>> ՍՊԸ-ին ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը:

սահմանված ժամկետում փաստաթղթեր ընդհանրապես չներկայացվելու դեպքում հանձնաժողովի կողմից կմերժվի առաջին տեղը զբաղեցրած մասնակցի հայտը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ կներկայացվի հաջորդ տեղ զբաղեցնող մասնակցին:

*Ընդունվել է որոշում՝ կողմ - 4, դեմ - 0:*

**4. <<ՀՀՔՊԿ-ԳՀԱՇՁԲ-17/10>> ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին**

---

(Ա. Ջանջուղազյան)

4.1 Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել 2017 թվականի օգոստոսի 4-ին ժամը 12:00-ին ՀՀ ԿԱ քաղաքաշինության պետական կոմիտեում, ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3, IV հարկ հասցեում:

*Ընդունվել է որոշում՝ կողմ - 4, դեմ - 0:*

Հանձնաժողովի Նախագահ՝ ________________ Ա. Ջանջուղազյան

Անդամ՝ ________________ Ռ. Եղիազարյան

________________ Ա. Գրիգորյան

________________ Ֆ. Սարգսյան

Արձանագրությունը կազմեց Հանձնաժողովի քարտուղար՝ ________________ Տ. Վասիլյան

# Ն Վ Ա Ղ Ե Ց Վ Ա Ծ   Գ Ն Ա Յ Ի Ն   Ա Ռ Ա Ջ Ա Ր Կ

## ՀՀՔՊԿ-ԳՀԱՇՁԲ-17/10 ծածկագրով մրցույթի

Առաջարկված գների նվազեցման նպատակով ոչ գնային պայմանները բավարարող գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների հետ իրականացվող բանակցությունների ընթացքում <<Սարգիս և Մարիաննա>> ՍՊԸ-ի կողմից ներկայացվում է հետևյալ նվազեցված գնային առաջարկը.

ՀՀ դրամ

| Աշխատանքի անվանումը | Արժեքը (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) /տառերով և թվերով/ | ԱԱՀ** /տառերով և թվերով/ | Ընդհանուր գինը /տառերով և թվերով/ |
|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4=2+3 |
| ՀՀ Արմավիրի մարզի Էջմիածին քաղաքի թիվ 2 երաժշտական դպրոցի վերակառուցման նախագծային աշխատանքներ | 2 350 000 երկու միլիոն երեք հարյուր հիսուն հազար | | 2 350 000 երկու միլիոն երեք հարյուր հիսուն հազար |
| | 2.290.000 երկու միլիոն երկու հարյուր իննսուն հազար | | 2.290.000 երկու միլիոն երկու հարյուր իննսուն հազար |
| | | | |
| | | | |
| | | | |
| | | | |
| | | | |

<<Սարգիս և Մարիաննա>> ՍՊԸ տնօրեն՝

ստորագրությունը

Կ. Տ.

## Ն Վ Ա Զ Ե Ց Վ Ա Ծ   Գ Ն Ա Յ Ի Ն   Ա Ռ Ա Ջ Ա Ր Կ

### ՀՀՔՊԿ-ԳՀԱՇՁԲ-17/10 ծածկագրով մրցույթի

Առաջարկված գների նվազեցման նպատակով ոչ գնային պայմանները բավարարող գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների հետ իրականացվող բանակցությունների ընթացքում <<Էմ Ջի դիզայն>> ՍՊԸ-ի կողմից ներկայացվում է հետևյալ նվազեցված գնային առաջարկը.

ՀՀ դրամ

| Աշխատանքի անվանումը | Արժեքը (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) /տառերով և թվերով/ | ԱԱՀ** /տառերով և թվերով/ | Ընդհանուր գինը /տառերով և թվերով/ |
|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4=2+3 |
| ՀՀ Արմավիրի մարզի Էջմիածին քաղաքի թիվ 2 երաժշտական դպրոցի վերակառուցման նախագծային աշխատանքներ | 2 350 000 (Երկու միլիոն երեք հարյուր հիսուն հազար) | | 2 350 000 (Երկու միլիոն երեք հարյուր հիսուն հազար) |
| | 2 300 000 (Երկու միլիոն երեք հարյուր հազար) | | 2 300 000 (Երկու միլիոն երեք հարյուր հազար) |
| | | | |
| | | | |
| | | | |
| | | | |
| | | | |

<<Էմ Ջի դիզայն>>ՍՊԸ տնօրեն՝ Ա. Միքայելյան

ստորագրությունը

Կ. Տ.

27. 07. 2017թ.

# «Էմ Ջի դիզայն» ՍՊԸ

Պետական լիցենզիա N 15747

ք. Երևան, Բաղյան 1-ին նրբ, 6/6
Հեռ: /+37493/130621,
E-mail:mgdesign19@gmail.com

_________ No _____________

Լիազորագիր

Ես՝ <<Էմ Ջի դիզայն>> ՍՊԸ-ի տնօրեն Արմեն Միլիտոնյանս /նույնականացման քարտ՝ 000575035, տրված 24.09.2013թ./ լիազորում եմ Գոհար Ռազմիկի Ավագյանին /նույնականացման քարտ՝ 005994843, տրված 26.06.2017թ/ իմ անունից հանդես գալու ՀՀ ԿԱ քաղաքաշինական պետական կոմիտեում:

*Լիազորող՝* *Արմեն Միլիտոնյան*